

Ա Ր Ա Ր Ա Տ

ԱՄՍԱԳԻՐ

ԿՐՕՆԱԿԱՆ, ՊԵՏԱԿԱՆ, ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ, ԲԱՐՈՅՈՒՆ ԵՒ ԱՁԳՆՈՒՆ

ԹԻԻ Թ. — ՇՐՋԱՆ Է.

1874

ՏԱՐԻ Է. — ՍԵՊՏԵՄԲԵՐ 50

ԿՐՕՆԱԿԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ԵԿԵՂԵՑԻՈՅ ԱՆՑԵԱԼՆ.

(Շ-ր-ն-ի-ն-ն)

Չմոռանալք յիշել նաև, զի Տասնե-
րորդ դարու մէջ մեր Արաս թագաւոր՝
Նկեղեցական Նուիրապետութեան մեծ
աջակից և օժանդակ հանդիսացաւ, և իւր
տիրած երկրի և վարած իշխանութեան
մէջ բաւական արդիւնաւոր եղաւ յօգուտ
և ի պայծառութիւն Նկեղեցւոյ, և ժո-
ղովրդեան խաղաղութեան և զարգացման
համար ամեն կարելի միջոցներ և հնարներ
ի գործ դրաւ, երկիրը բարեկարգեց, ինչ
ինչ կարեւոր շինութիւնքը յաւելացոյց,
և յաջողեցաւ և դաստիարակութեան
խնդրոյն ուշադրութիւն տուաւ, դպրոց-
ները շատացոյց, նոյնպէս վանքերը, Ն-
կեղեցիներ հիմնեց, որոց մէջ նշանաւոր
է Կարուց Առաքելոց անուանեալ եկեղե-
ցին, և սորա համար էր՝ զի Արխաղաց
Բեր թագաւորն խրոխտ և յանդուգն
սպառնալիք խրկելով՝ իբր զի յիշեալ Ն-

կեղեցին Վրաց ծխով օրհնել կամի,
Արաս՝ Հայաստանեայց Նկեղեցւոյ փա-
ռաց նախանձախնդիր և սորա ուղղափա-
ռութեան սիրով զգածեալ և վստեալ
զոլով՝ շտապեց և կարեւոր դասը տուաւ
Բերին, վասն զի ի պատերազմի բռնելով՝
երկու աշերէն ևս զրկեց զնա:

Ժրդ դարու մէջ՝ ոչ աւելի նուազ
քան զԱրաս նշանաւոր են Ողորմածն
Աշոտ թագաւոր և իւր թագուհին Խոս-
րովանոյշ, որոց առաքինական բարեմաս-
նութիւնք և հոգեւանդ զգացմունք՝ ա-
մենեցուն սերը և համակրութիւնը զը-
րաւած էին:

Թող ի լուծեան ֆեան յիշեալ դա-
րու մէջ Մ. զգային և Նկեղեցական այլ ինչ
ինչ անցքեր, որք աւելի նախատանաց
արդիւնք ստացան և ոչ սակաւ չարիք
արգասաւորեցին, զորս յիշելն անգամ
զըւանք կրերէ, թող որ՝ յօշուածոյսնը-
պատակին անհամաձայն լինելով՝ ի մէջ
ածելոյ ևս յարմարութիւն չկայ. ուս-
տի անցնիլք Ժ. Ա. ըդ դարուն:

Այս դարուս մէջ ինչպէս Բաղրատուն-
եայ իշխանութեան վախճանը կիբուեցաւ,

Միտասաներորդ դարու մէջ՝ մեր Ազգի և Նկիզեցւոյ համար Նրդ դարէն ոչ կարի նուազ արդիւնք ունեցող ԺԱՐԴ դարու հիմը դրուած սեպելով՝ պէտք է մտիթարուիլ՝ զի այս (ԺԱՐԴ) դարս բաւական արդիւնաւոր անցաւ, որոյ պըտուղները քաղեցին յՆրկոտասաներորդ դարու:

Այս դարուս մէջ մահոս և կենաց կշիռ ունեցող բաւական դէպքերն կարող էին թէ՛ օգտաբեր և թէ՛ ֆլասատու լինել, սակայն յաւէտ և միշտ կրօնական բարեկարգութեանց հետզհետէ աւելի պայծառ հիմնարկութեամբ սկսուիլն և շարունակուիլն, ևս Հայկական դպրութեան յատուկ և խորին ուշադրութիւն նուիրելով վերանորոգ ծաղկիլն՝ երբէք ֆլասակար չլինեիլն զատ՝ հանապազ իւրեանց մեծ օգուտներ ունէին և ունեցան:

Ապացոյց:

Ոչ ապաքէն Նկիզեցական բարեկարգութեանց և Հայկ.-Ազգային դպրութեան աղօտանալն և տգիտութեան ընդհանրանալն տեղիք տուած էր, և Թոնդրակեցոց աղանդոյն առաջքը առնուել չը կարողանալով, որ երբեմն Նեէմեան հրոյ նման մոխրի տակ թաղուած ֆնացած էր, ԺԱՐԴ դարու մէջ սաստկացաւ և այնպէս ոգևորեալ սկսաւ աւարածուիլ, զի եթէ ի ժամանակին Նկիզեցական Նուիրապետութիւնն խոհեմ միջոցներ չգործադրէր, ո՞ր գիտէ՝ ինչ տեսակ և որքան երկպառակութիւններ՝ բաժանումներ պիտի յարուցանէր Նկիզեցւոյ մէջ, և Ազգն ինքնին յուզուած և միմեանց դէմ զինուած՝ անշուշտ եղբայրասպան կռիւններու դառն տեսարաններ պիտի ներկայա-

ցնէր և իւր բազմաթիւ անդամները պիտի օտարացնէր:

Թոնդրակեցւոց աղանդ՝ կենդ + քրիստոսեան ձևացնելով՝ — որ նոյն իսկ ի ներկայս Նիկիոսի *) կոչուած աղանդն լինիլ կը կարծուի, ինչպէս մի քանի նշաններէն ևս պարզ կտեսնուի, — պարունակած կանոնքն, պաշտամունքն և զեղծումներն կհրապուրէին մարդկային կիրքերը և ցանկութիւնքը, զուտ մարմնոյ կծառայէին, ուստի կարող էր և յաջողեցաւ բազմաթիւ տղէտ և ապուշ մարդիկը որսալ, զուցէ ստուարանայր **) նոցա թիւ՝

(*) Ի տեղիս տեղիս Արարատեան աշխարհին մէջ, ինչպէս լսած եմ՝ նաեւ Ատրպատականի մէջ, ոչ սակաւ Եզիտներ կան, որք գրեմ թէ Թոնդրակեցւոց աղանդն ունին: Աւանդութեամբ կասեն տեղացիք, զի սորա հետքերն են և լին:

Սոցա մէջ բազմաց պատահելով, և նկատելով որ շատերն Հայերէն գիտեն և կիսօրին, և ըստ բաւականին՝ Հայկական կերպարանք ևս կկրեն ինձ շատ հաւանական է կարծել՝ որ սորա ի Հայոց ուծացեալ անդամներ են և ցարդ կյարատենն եղեաց — զի կոչուելով: Նա և Հայոց հետ կարի ընտանեւոր կվարուին և փոխադարձ համակրութիւն կվայելն:

Եթէ զբաղմունքս ներեն և պատեհ միջոց ունենամ, կաշխատիմ Եզիտաց ի ներկայս պաշտած աղանդոյ կենցաղավարութեան, սովորութեանց և այլոց վիրայ կարելի տեղեկութիւնները ծաղկաքաղել և հրատարակել: Ի սոցանէ մեզ վերաբերեալ ուրիշ տեղեկութիւնք ևս կարեմք գտնել և սոցա Հայութիւնը ապացուցանել:

(**) Մեր Ազգային և Նկիզեցական պատմութիւնք բաւական մեծ կարեւորութիւն տուած են և պատմագրած Թոնդրակեցւոց աղանդը և շարժումները, յորոց կիմանամք որ՝ ի ժամանակին յոյժ սպառնալից ընթացք բռնած են: Սակայն զոհութիւն Աստուծոյ՝ որ մեր Նկիզեցւոյ մէջ այն-

եթէ խոհեմ և Քրիստոսնէական կրօնա-
սիրական բուն ջանից և ձգանց չհանդի-
պէր, այս ինքն՝ ճշմարիտ Աստուածապաշ-
տութիւնն, կրօնի ողջամիտ ուսումն և
հմտագոյն աւանդումն, անկեղծ բարե-
գործական սխրալիքն և առաքինութիւնը,
Ահիզեցական արարողութեանց վսեմու-
թիւնն՝ սրտազբաւ և ոգևորիչ ներգոր-
ծութիւնքն՝ Հայաստանեայց եկեղեցա-
կան՝ Առաքիլապետութեան և պաշտօնէից
ի ձեռս անմատչելի և ամուր վահաններ
լինելով՝ ըստ այնմ՝ զնոսա յաղթահա-
րելոյ կը յաճախէին:

պիսի աղանդ կամ կրօնափոխական շարժումներն
չնչին թուով մի մի մաս հերձելով Ազգային ամ-
բողջութենէն՝ կհանդարտուէին՝ ինչպէս եղած է
Թոնդրակեցւոցն ևս. ի ներկայս ևս ունիմք օրի-
նակներ: Բայց և այնպէս՝ իւրաքանչիւր մի դոյզն
մասի հերձուիլն անգամ՝ Ազգային Ամբողջութե-
նէն կորուստ և քնքումն լինելով՝ որով հետզհե-
տէ կնուաղի նորին թիւ և կտկարանայ վշտալի
և կարեւելք խոց է ողջամիտ և ազգասիրաց սրտից՝
և Հայ. եկեղեցւոյն դառն սուգ կպատճառէ:

Ի հնումն կրօնական հերձուածով բաժանուած
մասունք՝ ի Հայութենէ ևս իսպառ զրկուած և
անջատուած կհամարուէին, և հետեւած աղան-
դոյն կամ կրօնին պատկանած ազգութեան ա-
նուամբ կխմբուէին և կանհետանային ի մի ձու-
լուելով, և կամ ցան և ցրիւ կքնջուէին կամ բուն
Ազգի մէջ կրկին խառնուելով, կամ այլոց Ազգաց
մէջ թաղուելով, և կամ երբեմն տարօրինակ և
որոշ դիրքով կյարատուէին և մի տկար և խառ-
նափնոր ցեղ կկազմէին՝ ինչպէս են Եդիպ:

Ի ներկայումս ևս սմին հակառակ՝ թէ և դոյզն
ինչ միսթիարական երևոյթ ունեցող Ազգայնու-
թեան դէպքումն արթնացած և տարածուած է ի
մէջ հերձեալ ազգայնոց մէջ, այս ինքն՝ թէպէտ
օտար կրօնից կամ աղանդոց մէջ մտնելով՝ Հա-
յաստանեայց եկեղեցւոյ միութենէն կբաժանուին:

Այս առթիւ Պահաւեան Պարիզոր
փիլիսոփայի (իջուեաց Մաթիսարոս ճանչ-
ցուածն) անունը և ջանքերը յիշատա-
կաց և դրուատից արժանի են, որ Թոնդ-
րակեցւոց դէմ կուռ վառուած՝ անվանդ
ախոյիան կանգնած էր և ամեն ջանք ի
գործ դրաւ նոցա ընդհանրանալը արգե-
լիլոյ համար, և կարի իսկ արդիւնաւոր
յաջողեցաւ և հանդիսացաւ:

Թէպէտ Թոնդրակեցւոց աղանդ իս-
պառ չանհետացաւ, բայց կարի նուազա-
գոյն թուոյն վերածուեցաւ, և այնքանն
յԱհիզեցւոյ ևս ի բաց տարամբժուելով՝
Խ. Բարդուղիմէայ՝ Թապէոսի և Պարի-
զորի պատուական հօտ մաքրուեցաւ ի
չար որոմանց, և հանդարտութիւն թա-

սակայն Ազգայնութեան անունը և կնիքը չուրա-
նալով՝ շնորհն անգամ (սակաւոց բացառութիւնը
չմոռանալք) զի օտարազգոյ անուն ընդունին և
կրին, ուստի միայն նոր օրգեզրուած կրօնին կամ
աղանդոյն անունը վերադրուելով և զուգաւորե-
լով՝ Հայ Հոգովեական, Հայ. Լուսորական կը
կազմեն զինքեանս: Բայց ուրախանալով միայն՝
զի Հայ Ազգայնութեան եռանդով վերոյիշեալք
կարժանան և կխղճահարուին, և դառ կգործեն
խաղաղաբաւ շօտարանալոյ նկատել պէտք է՝ զի
մեք Հայքս ի ներկայումս քաղաքական իշխանու-
թիւն չունենալով՝ մեր Ազգութեան ամբողջու-
թեան կապը ի՞նչ կարող էր լինիլ՝ եթէ ոչ
հրէական Բո-րիւն համազգային Բի-բլիոն պա-
հելով և պաշտպանելով, ուրեմն որքա՞ն հիմնա-
ւոր և արդիւնաւոր կարող են լինել վերոյիշեալոց
շարժումներն և եռանդն:

Հոգ չէ՝ կյուսամք անշուշտ և կհաւատամք
Աստուծոյ ողորմութեան, զի այս շարժումներ
հետզհետէ կհասունանան և մի օր կարգասարե-
րին անկէղծ հրէական Բո-րիւն համայն Ազգիս մէջ
Մայրենի ողորմութեամբ կհաւաքուին և զօրանալով:

